

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՕՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտոնական տոնացույցում հոկտեմբերի 5-ը ամրագրվել է որպես Ուսուցչի օր: Օրվա ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 1966 թ. այդ օրը Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Աշխատանքի միջազգային կազմակերպության համատեղ հրավիրված կոնֆերանսում ընդունվել է «Ուսուցչի կարգավիճակին առնչվող ուղեցույց» վերտառությամբ փաստաթուղթ, որն ուսուցիչների աշխատանքը կարգավորող առաջին միջազգային փաստաթուղթն էր:



Դոնի Ռոստովի թիվ 61 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաները (Ուսուցչուհի Արմինե Հովսեփյան):

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆՔ, ՄԻՐԵԼԻ՝ ՈՒՍՈՒՑԻՉ



Հայոց դպրոցի սիրելի ուսուցիչներ, հայրերի և մայրերի դաստիարակության հայրենանվեր ու անձնուրաց գործի անդուլ մշակներ, շնորհավորում ենք Ձեզ ամենատարողունակ և ամենամարդկային մասնագիտական օրվա Ուսուցչի օրվա առիթով: Դուք, որ լուռումուռ, ի գին ամեն զրկանքի ձեր ուսերին եք կրում մեր ժողովրդի ամբողջականության, ազգային արժեքների լիարժեք պահպանման, մեր ժողովրդի անպարտելիության ու կեցության գաղտնախորհուրդ հավատքի սերնդետեղումը ներարկում: Դուք, որ բաց գիտակցում եք այսօր դպրոցի առջև դրված բավականին լուրջ գործի կոչող իրավիճակը, գիտե՛ք, որ մեր դպրոցներում պետք է թագավորի չորս պաշտամունք հայրենիքի, մարդու, գրքի, մայրենի լեզվի: Գիր ու գրականության, դպրոցի և ուսուցչի դարավոր պաշտամունք ունեցող ժողովուրդն է ձեզ ուսուցիչ կարգել: Ուսումնական տարվա զանգի յուրաքանչյուր դողանք թող ձեզ համար հնչի գալիքի համար լույսի սերմեր շաղ տալու բարի ակնկալիքով:

*Հիշենք ու հպարտանանք, որ  
Կյանքում բոլոր լուսե մարդկանց  
Ուսուցիչ անունն են տվել...  
Շնորհավո՛ր տոնը, սիրելի ուսուցիչ:*

Մտղական խորհուրդ  
ք. Դոնի Ռոստով

Ուսուցչի օրն ընդգրկված է ՄԱԿ-ի կողմից նշվող միջազգային օրերի ցանկում և հոկտեմբերի 5-ին նշվում է 100-ից ավելի պետությունում: Տոնի գլխավոր առաքելությունն ուսուցիչներին աջակցելն է, համոզվելը, որ ուսուցիչները կարողանում են բավարարել ապագա սերնդի պահանջները:



Դոնի Ռոստովի թիվ 83 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաներն իրենց սիրելի ուսուցչուհու՝ Սոնա Կարապետյանի հետ:

Նոր ուսումնական տարին վաղուց իր իրավունքների մեջ է: Իր իրավունքների մեջ է նաև Դոնի գեղեցիկ աշունը: Հենց այս դրական հույզերով ու հետաքրքիր քննարկումների ակնկալիքով էին հայ համայնքի հյուրասրահում հավաքվել քաղաքի տարբեր դպրոցներին ու եկեղեցիներին կից հայոց լեզվի խմբակների ուսուցիչները:

Նրանք՝ երկարամյա մանկավարժներ Շողիկ Միմավոնյանը, Աննա Բեգարյանը, Մարիամ Հակոբյանը, Անահիտ Պողոսյանը, Լուսինե Պետանյանը, Արմինե Վարդանյանը, Սոնա Կարապետյանը, Արմինե Օհանյանը, Արմինե Ղազարյանը, Արմինե Հովսեփյանը, Հրաչիկ Գևորգյանը, Ռուզաննա Կարապետյանը և ուրիշներ, ինչպես նաև



համայնքի ղեկավարներն ոչ մի գեղեցիկ առիթ բաց չեն թողնում միասին հավաքվելու հայ արվեստի ու գրականության մեծերի հորելյանները նշելու, օրացույցում հայկական ու եկեղեցական տաղավար տոներն ու ծեսերը հետաքրքիր միջոցառումներով տոնելու: Այս անգամ գրական-երաժշտական ավանդական ցերեկույթը նվիրված էր Ուսուցչի օրվան: Ուսուցիչներն իրենք իրենց նվեր էին արել պատրաստել էին գեղեցիկ սեղան, հետաքրքիր հարցաթերթիկներ, հայկական նշանավոր ֆիլմերից առանձնացրել էին դպրոցական դասապրոցեսին նվիրված տեսարաններ: Ուսուցիչների կատարմամբ հնչեցին նաև հայ պոեզիայի, ժողովրդական երգերի սիրված էջեր:

Որքա և սեր ու կարոտ կար նրանց ջերմ խոսքերում: Երևի հենց այդ սերն էլ հայրենիքի ու ժողովրդի հանդեպ նրանց պահում է իրենց կոչմանը հավատարիմ ուր էլ որ լինեն: Այո, ուր էլ որ լինի հայ ուսուցիչը մեկ առաքելություն ունի հայ մանկանը հայ պատկառության մեջ:

Վերջում համայնքի գործադիր տնօրեն Սերգեյ Սալադովը շնորհավորեց մանկավարժներին իրենց մասնագիտական տոնի առթիվ ու հանձնեց գեղեցիկ հուշանվերներ:

Լիլիթ ԹԵՎՈՍՅԱՆ